

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ՏԱՂԵՐՆ ՈՒ ՄԵՂԵԴԻՆԵՐԸ

*Աստղիկ Մուշեղյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան հին
ձեռագրերի ինստիտուտ – Մատենադարան
Հայ հոգևոր երաժշտության կենտրոն*

Հայ հոգևոր տաղերգության հսկայածավալ ժառանգությունից երաժշտական բաղադրիչով սակավաթիվ օրինակներ են հասել մինչև մեր օրերը: Ժամանակի ընթացքում Հայաստանում ու Կիլիկիայում գործող բազմահազար եկեղեցիների վեհաշուք խորաններից հնչած երկնառաք ու հոգեզմայլ տաղերն ու մեղեդիները մոռացության են տրվել և մի քանի դար է, ինչ լուռ հանգրվանում են խազավոր ծիսամատյաններում: Բանավոր ավանդությամբ մինչև XIX դար հարատևած տաղային ստեղծագործության նմուշները հայկական նոտագրության ստեղծումից հետո գրի են առնվել: Դրանց մի մասը տեղ է գտել ձեռագիր ձայնագրյալ ժողովածուներում, իսկ մյուս մասը՝ առավել քաջածանոթ Նիկողայոս Թաշճյանի, Համբարձում Չերչյանի, Եղիա Տնտեսյանի, Էմի Աբգարի, Կոմիտասի, Էդվարդ Հակոբյանի և այլոց ձայնագրություններով, թեև մեծ մասամբ հրատարակվել, սակայն հիմնովին չեն ուսումնասիրվել: Խոսքը վերաբերում է նաև Հայ Եկեղեցու կողմից վավերացված՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորին: Մեր աշխատանքը մի փորձ է՝ դույզն չափով լրացնելու այդ բացը և ներկայացնելու Նիկողայոս Թաշճյանի ձայնագրությամբ պահպանված Հայոց Պատարագի տաղերի և մեղեդիների ընդհանուր համապատկերը՝ ըստ կարելվույն ճշգրտելով դրանցից մի քանիսի ստեղծման ժամանակաշրջանն ու վայրը, հեղինակային պատկանելությունը, Գանձարան-Տաղարանների հետ ունեցած անմիջական աղերսները, վերհանելով երաժշտական բաղադրիչներին բնորոշ առանձնահատկությունները, մեղեդիական փոխառնչություններին վերաբերող և այլ հարցեր:

Ինչպես հայտնի է, 1873 թ. Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսը, ի նպաստ եկեղեցական երգեցողության միօրինակության, ձեռնարկում է Շարականի, Ժամագրքի և Պատարագի երգերի ձայնագրությունը, որին ձեռնամուխ է լինում Կ. Պոլսից հրավիրված Ն. Թաշճյանը՝ իրեն օգնական ունենալով Մ. Եկմայանին

ու Պ. Ճեպեճյանին¹, աջակից՝ Վ. Մանկունի սրբազանին, Ս. Ամատունուն, Գ. Այվազյանին և այլոց: Հրատարակության առաջաբանում (խորագրված՝ «Զեկուցում») Ն. Թաշճյանը գրում է. «*արժան դարեցաւ բազմավաստակ Հայրապետս մեր վերստին տպագրութեամբ ի լոյս ընծայել զձայնագրեալն ըստ իւրում իսկ թելադրութեան զերգս սպասատրութեան խորհրդոյ Պատարագին [...] եւ յակն արկեալ զամփոփեալսն յառաջին տպագրութեանն երգեցողութեանց՝ անձանձիր աշխատութեամբ ճոխացոյց զնոսին տալով ձայնագրել եւ ճշդել զամենայնն ըստ իւրում ներդաշնակ եւ հնաւանդ գեղեցիկ եղանակատրութեան*»²: Թեև սկզբնապես հայ պարբերական մամուլի էջերում, հայ երաժշտության պատմությանը նվիրված աշխատություններում տարակարծություններ և վերապահումներ են եղել այս ձայնագրությունների առնչությամբ³, սակայն հետագա ուսումնասիրությունների ընթացքում դրանք փարատվել են: Հայ երաժշտագիտության մեջ Ն. Թաշճյանի ձայնագրած ժողովածուները գնահատվել են որպես գիտական-գեղարվեստական բարձր արժեք ունեցող աշխատություններ (տե՛ս Ն. Թահմիզյանի⁴, Ռ. Աթայանի⁵, Մ. Մուրադյանի⁶, Ա. Արևշատյանի և Լ. Հակոբյանի⁷, Մ. Նավոյանի⁸, Ա. Բաղդասարյանի⁹ և այլոց ուսումնասիրությունները): Ն. Թահմիզյանը, մասնավորաբար, նշյալ ձայնագրյալ ժողովածուները, այդ թվում նաև Պատարագը, դիտել է որպես հայ հոգևոր երաժշտության հիմնասյունը

¹ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան, տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հատ. 4, Երևան, 1978, էջ 141:

² *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1878, էջ 3:

³ Տե՛ս Ս. սրկ. Ամատունի, Պ. Նիկողայոս Թաշճյանի հողվածի աղթիվ, *Արարատ*, Ս. Էջմիածին, 1883, է. էջ 306-307: Ա. քին. Հիսարոյան, Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց (1768-1919), Կ. Պոլիս, առևտրական նոր տպարան Մ. Յովակիմեան, 1914, էջ 77-79: Ք. Քուշնարյան, *Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2008, էջ 11 և 74:

⁴ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, Ереван, изд. АН Армянской ССР, 1977, с. 8, а также прим. 9.

⁵ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան, (ՀՍՀ):

⁶ Մ. Մուրադյան, *Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 121:

⁷ Ա. Արևշատեան, Լ. Յակոբեան, *Յառաջաբան «Ձայնագրեալ շարական հոգետր երգոց» հալորի*, Երեւան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1997, էջ XXVIII:

⁸ Մ. Նավոյան, *Ճաշու շարականներ*՝ Ն. Թաշճյանի ձայնագրությամբ. տե՛ս *Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Ճաշու շարականներ (փոխադրված հայկական նոսրագրությունից եվրոպականի)*, Երևան, «Լիմուշ» հրատ., 2006, էջ 4-6:

⁹ Ա. Բաղդասարյան, *Խմբագրի կողմից. տե՛ս Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի (փոխադրություն հայկական նոսրագրությունից եվրոպականի)*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2008, էջ 339-341:

ներկայացնող և ավատատիրական Հայաստանի հոգևոր-մասնագիտացված երգաստեղծությունն արտացոլող գլխավոր սկզբնաղբյուրներ, որոնք առանձնանում են նյութի հարստությամբ և ոճական մաքրությամբ¹⁰: Ավելին, ըստ Ռ. Աթայանի՝ Ն. Թաշճյանի գրառած բազմաթիվ եղանակներում խազային նոտագրությունից շատ բան պահպանվել է առանց զգալի փոփոխության¹¹:

Ս. Պատարագի երգեցողությունը տրված է չորս տարբերակով.

Ա. Ի պէտս Կիրակէից եւ այլոց հանդիսատւոր ատուրց,

Բ. Ի պէտս լուր ատուրց,

Գ. Ի պէտս հինգ Տաղաւարաց, յորս պատարագիցէ Արքեպիսկոպոսն յիւրում վիճակի,

Դ. Ի պէտս Մեծի Պահոց շաբաթ եւ Կիրակէ ատուրց:

Ս. Պատարագի արարողության համար Ն. Թաշճյանը գրի է առել 16 մեղեդի և 19 տաղ, որոնք նախատեսված են Տերունական և սրբոց տոներին կատարվելու համար: Դրանք ներկայացված են երկու առանձին բաժիններով՝

«Մեղեդիք»¹²

Ծննդյան՝ «Այսօր տօն է»,

Աստվածածնի, Ծննդյան և Ավետյաց՝ «Բանին Հօր» և «Աչքն ծով»,

Ծաղկազարդի՝ «Յիսուս Քրիստոս»,

Հարության՝ «Դիտելով զհեթանոսս», «Այսօր մեռեալք», «Այսօր ողբային», «Ի կոյս վիմէն», «Ազատեա զգերեալսն»,

Հարության և Եկեղեցու՝ «Այսօր հարսն Լուսոյ»

Ջատկի և Հինանց Կիրակիների՝ «Միաշաբաթ օր հանգստեան»,

Համբարձման՝ «Այսօր անդրանիկ Հօր»,

Հոգեգալստյան՝ «Այսօր Սուրբ Հոգին եկեալ»,

Վարդավառի «Լեառն ցնծա դու, Թափօր»,

Առաքելոց «Այսօր ցնծացէք, եղբարք»,

Հայրապետաց՝ «Ի հանդէս տօնի»:

«Տաղք ըստ պատշաճի ատուրցն,

զորս երգեն զկնի «Քրիստոս պատարագեալ»-ի»¹³

Ծննդյան՝ «Երկինք երկնից»

¹⁰ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, с. 8.

¹¹ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան:

¹² Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, էջ 95-114:

¹³ Նույն տեղում, էջ 156-171:

Տեառնընդառաջի՝ «Քրիստոս փառաց Թագաւորն»
 Զատկի՝ «Յարեաւ Քրիստոս»,
 Հարության՝ «Ով պարտիզպան», «Յայն առաւօտին»
 Համբարձման՝ «Եւ ի յերկինս վերացեալ»
 Հոգեգալստյան՝ «Միշտ էիդ անեղ»
 Վարդավառի՝ «Այսօր ցնծայ լեառն Թափօր»
 Աստուածածնի՝ «Իսնկին ծառին նման ես»
 Ավետյաց՝ «Աւետիս քեզ, Մարիամ»
 Խաչի՝ «Աստուածածին Կոյսն Մարիամ», «Տիրամայրն»
 Խաչի՝ «Խաչն ի նախնումն»
 Մարտիրոսաց՝ «Հանդուրժելով չարչարանաց»
 Հայրապետաց՝ «Հայրապետաց հանուրց»:

Տաղերից չորսը տեղ են գտել «Յաւելուած»-ում¹⁴ Զրօրինյաց «Ով զարմանալի» (խորագիր՝ «Յորդորակ ի Գրիգորէ կաթողիկոսէ») և «Այսօր ծայնն հայրական», ինչպես նաև «Աստուածն ամենի» և Խաչի «Կանայք ամենայն» տաղերը:

Հայ երաժշտագիտության մեջ Ձայնագրյալ Պատարագում տեղ գտած 35 տաղերից ու մեղեդիներից քննության են արժանացել ընդամենը յոթը: Դրանցից առաջինը անհայտ հեղինակի «Ազատեա զգերեալսն» Հարության մեղեդին է, որը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել Ք. Քուշնարյանն իր «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» կապիտալ աշխատության մեջ¹⁵: Հետագայում վեց տաղի է անդրադարձել Ն. Թահմիզյանը՝ «Աչքն ծով»¹⁶, «Խաչն ի նախնումն»¹⁷, «Դիտելով զհեթանոսս»¹⁸, «Տիրամայրն»¹⁹, «Աստուածն ամենի»²⁰ և «Ով պարտիզպան»²¹:

Ըստ ամենայնի՝ էջմիածնում Ն. Թաշճյանի ձեռքի տակ եղել են միջնադարյան ձեռագիր երաժշտաձիսական մատյաններ, որոնց հետ նա ստուգել-համեմատել է երգվող նմուշները²²: Ձայնագրյալ Պատարագի

¹⁴ Նույն տեղում, էջ 206-224:

¹⁵ Ք. Քուշնարյան, նշվ. աշխ., էջ 177-178 և 482-489:

¹⁶ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 218:

¹⁷ Նույն տեղում, էջ 268:

¹⁸ Նույն տեղում, էջ 270:

¹⁹ Նույն տեղում, էջ 273:

²⁰ Նույն տեղում, էջ 312:

²¹ Նույն տեղում, էջ 315:

²² Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, с. 8-9.

երաժշտությունը, Ռ. Աթայանի գնահատմամբ՝ «ներկայացնում է երգային բազմազան ձևի մեղեդիներից կերպված ծավալուն ամբողջություն՝ հայ միջնադարյան երգահանների վարպետության բարձրարժեք արգասիքը»²³։ Պետք է նշել, որ այդ երգահանները մեծ մասամբ անանուն են։ Մինչ այժմ հայտնի է տաղային միավորներից հինգի հեղինակային պատկանելությունը՝ «Աչքն ծով» և «Դիտելով զհեթանոսս»՝ Գրիգոր Նարեկացի (X-XI դդ.), «Խաչն ի նախնունմն»՝ Կոստանդին Սրիկ Սսեցի (XIII դ.), «Աստուածն ամենի» և «Ով պարտիզպան»՝ Առաքել Սյունեցի (XIV-XV դդ.)։ Որքան էլ զարմանալի է, ձայնագրյալ նմուշների ցանկում ներառված չէ Ներսես Շնորհալու տաղերից և ոչ մեկը. անհնար է կարծել, որ մեծ երգեցողի և բարենորոգչի տաղային արվեստն այնքան էր մոռացվել, որ ձայնագրության համար չէր գտնվել գեթ մեկ նմուշ։ Չէ որ հենց նույն ձայնագրյալ Պատարագում մեծ թիվ են կազմում Շնորհալի հայրապետի հորինած երգերը կամ սրբասացությունները²⁴։ Շնորհալու տաղերը մշտապես ընդգրկված են եղել Հայոց Պատարագամատույցում. այսպես՝ XI-XIX դարերն ընդգրկող բնագրում, օրինակ, նշվում է չորս տաղ՝ «Բարբառ աւետեաց ձայնի» (Ավետյաց), «Նոր ծաղիկ բոխէ այսօր» (Ծննդյան), «Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն» (Փոխման Ս. Կուսի) և «Աստուածային խորոցն անճառ» (Մարգարեից)²⁵։ Հնարավոր է, որ դրանց մեղեդիները պահպանված չեն եղել, սակայն հենց այդ ժամանակաշրջանում՝ XIX դարի երկրորդ կեսին, հենց Ն. Թաշճյանի հարազատ միջավայրում՝ Կ. Պոլսում, իրենց երաժշտական բաղադրիչով կենցաղավարում էին Շնորհալու գրչին պատկանող այլ նմուշներ, որ մեզ են հասել հայտնի երաժիշտ և ձայնագրագետ Համբարձում Չերչյանի ձայնագրությամբ։ Դրանք են՝ Խաչելության «Ծարաւեցաւ Տէրն ի Խաչին», Հարության «Նոր ծաղիկ պայծառ» և «Նստեալ կանայքն» տաղերը, որ տեղ են գտել Արմաշի վանքի ձեռագրերում²⁶։

Ձայնագրյալ Պատարագում, ըստ էության, արտացոլված է հայ տաղերգությունն իր գրեթե ողջ պատմական ընթացքով, որն իր թռիչքը սկսել էր X դարում՝ Գրիգոր Նարեկացու արվեստում՝ զարգանալով ու հարատևելով մինչև Վերանորոգության և Նոր շրջանի հեղինակներ։ Հատորի առանցքն են կազմում կիլիկյան շրջանում ստեղծված տաղային նմուշները, որտեղ հայ

²³ Ռ. Աթայան, Պատարագ, ՀՍՀ, հատ. 9, Երևան, 1983, էջ 147։

²⁴ Չխոսելով արդեն Շնորհալու բազմաքանակ շարականների և ժամագրքի երգերի մասին, որ տեղ են գտել Ն. Թաշճյանի ձայնագրած մյուս ժողովածուներում։

²⁵ Զ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատուցք Հայոց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1897, էջ 631։

²⁶ Մաշտոցի անվան Մատենադարան, Նորագույն հավաքածու, ձեռ. NN 5, 6, 103 և այլն։

երաժշտարվեստն աննախադեպ ծաղկման էր հասել: Գրիգոր Գ Պառլապունին, Ներսես Շնորհալիյն, Ներսես Լամբրոնացին, Կոստանդին Սրիկ Սսեցին, Հակոբ Կլայեցին, Գրիգոր Սկևռացին, Գևորգ Սկևռացին, ինչպես նաև նրանց հետնորդները, այդ թվում նաև՝ բազմաթիվ անանուն ստեղծագործողներ, պատկառելի երաժշտական ժառանգություն էին թողել, ձևավորվել էին մի շարք երաժշտաժեսական մատյաններ (Շարակնոց, Մաշտոց, Պատարագամատույց, Ժամագիրք, Գանձարան, Տաղարան, Մանրումունք)²⁷, որոնց ընտիր օրինակներից վանքերում կատարվում էին ընդօրինակություններ, զարգացման բարձր աստիճանի վրա էր գտնվում մանրուման արվեստը: Տարբեր վարդապետարաններում գործունեություն ծավալած հայտնի երաժիշտ-փիլիսոփաներից էին՝ Ստեփանոս Մանուկ վարդապետը (*Գիտնական մականվանյալ*)՝ Ներսես Շնորհալու ուսուցիչը (XII դ., Կարմիր վանք)²⁸, Հովհաննեսը՝ «զընտիրն ի բեմբականս և զանյաղթն յերաժշտականս» (1198 թ., Հոռմկլա)²⁹, Գրիգոր Խուլը՝ «պատուական վարժապետն եւ երաժիշտն եւ առաջին քարտուղարն Սսոյ» (XII-XIII դդ.)³⁰, Գրիգորիսը՝ *թարմապար* երգեցողն ու գրիչը (1238 թ., Սիս)³¹, Հովսեփ երաժշտապետը (Դրազարկ, 1241 թ.)³², Սամուել երաժշտապետը՝ «հոգևոր հայր եւ բարի վարդապետ [...] եւ մակացու յաստուածայինս» (1250 թ., Ձորոյբերդ)³³, Վարդան *բարեշնորհ* երաժիշտը (1257 թ., Ակներ)³⁴, Սիմեոն փիլիսոփան (1258-1260 թթ., Արքակաղին)³⁵, Մանուել

²⁷ Այս մասին տե՛ս **Ն. Թահմիզյան**, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, էջ 46:

²⁸ **Ղ. Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 51: **Նույնի՝ Հայապարում. պարմիչք եւ պարմութիւնք Հայոց**, հատ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1901, էջ 320-321: **Ա. Ապոյան**, *Պարմութիւն հայ դպրոցի*, Ա. հատոր, Գահիրէ, տպարան «Նոր աստղ», 1946, էջ 194-195:

²⁹ *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 294:

³⁰ **Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան**, *Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 105 և 517:*

³¹ **Գ. Վ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար. Հայաստանի ճամփորդ*, մասն առաջին, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսան, 1879, էջ 63-65: **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 230: **Գ. Զարբհանալեան**, *Մարտեադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ)*, Վենետիկ, Միսիթարեան տպարան, 1889, էջ 168: **Գարեգին Ա. Կաթողիկոս**, *Յիշարակարանք ձեռագրաց*, Ա. հատոր (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, ս. 859-862 և 929-930: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 203-205:

³² **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 517: **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. Գ, Երևան, Պետական Համալսարանի հրատարակչություն, 1946, էջ 716: **Ա. Ղազարոսյան**, Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը, *Էջմիածին*, 2008, Ը, էջ 72:

³³ **Գարեգին Ա. Կաթողիկոս**, *Յիշարակարանք ձեռագրաց*, Ա. հատոր, ս. 1009: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 256:

³⁴ *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 292:

³⁵ **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 517: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 298:

իմաստուն երաժիշտը (1273 թ., Ականց անապատ)³⁶, Թորոս վարդապետ փիլիսոփան (1307 թ., Ձորոյն Ս. Թորոսի վանք)³⁷, Մարգարա փիլիսոփան (1335 թ., Թյուրքթի վանք)³⁸ և Հովհաննես փակակալը (առանց թվականի, Ակներ)³⁹: Ղ. Ալիշանը հիշատակում է նաև մի քանի այլ երաժիշտների՝ Ավագ և Թորոս երեցներ, Հովհաննես կուսակրոն, Լևոն, Ներսես, Հովհան արեղա, Կոստան դալիր, «որոց անձանթ են ուրև և գիա՛րդն»⁴⁰:

Կիլիկյան շրջանում է կատարելության հասել ազգային մասնագիտացված երգաստեղծության մեծակերտ-զարդարական ոճը⁴¹, որի կնիքն է կրում Ձայնագրյալ Պատարագի նմուշների գերակշիռ մասը: Ք. Քուշնարյանը, ուսումնասիրելով XII-XIII դարերի տաղային արվեստի նմուշները, գրում է, որ դրանք իրենց մտահղացման բարդության աստիճանով մոտոդիկ գրականության մեջ «գրավում են համարյա թե առաջին տեղը»⁴²: Նա ի մի է բերում դրանց առավել բնորոշ գծերը՝ երաժշտական բազմաբնույթ կերպարներ, մի քանի թեմայից բաղկացած և դրամատուրգիական բարդ հենքով ծավալվող կառույցներ, լայնաշունչ և ծավալուն հորինվածքներ, ոչ հստակ արտահայտված կառուցվածքային ձևեր, ազատորեն կիրառված գործիքային-իմպրովիզացիոն տարրեր, զարդուլորուն մեղեդիական հյուսվածք (որով դրանք համեմատելի են դառնում մեծակերտ-զարդարական ոճի ճարտարապետական հուշարձանների հետ): Այս տաղերում խոսքը դառնում է երկրորդական նշանակության բաղադրիչ, հաղթահարվում են ձայնեղանակային օրինաչափությունները, լայնորեն գործածվում են ձևափոխված աստիճաններով ձայնակարգեր՝ պայմանավորված երաժշտության բովանդակության մեջ հոգեբանական կողմի խորացմամբ և անհատի նրբին, անձնական ապրումների և կենսական բախումների արտացոլմամբ: Ի մի բերելով իր դիտարկումները՝ Ք. Քուշնարյանը գալիս է այն եզրահանգման, որ XII-XIII դարերի տաղերն իրենցից ներկայացնում են հայ մոնոդիկ մասնագիտացված երաժշտական արվեստի

³⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 432: **Գ. Զարբհանալեան**, Մարենադարան հայկական թարգմանությանց նախնեաց (դար Դ-ԺԳ), էջ 472:

³⁷ **Ղ. Ալիշան**, Միտան, էջ 156: **Մ. Օրմանեան**, Ազգապարում, հատ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, § 1232 (ս. 2088): **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, էջ 358, N 73:

³⁸ **Գ. Վ. Սրուանձտեանց**, Թորոս Աղբար. Հայաստանի ճամփորդ, մասն երկրորդ, Կ. Պոլիս, տպագրություն Գ. Պաղտատյեան (Արամեան), 1874, էջ 449-450: **Ղ. Ալիշան**, Միտան, էջ 517 և 535:

³⁹ **Ղ. Ալիշան**, Միտան, էջ 517:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., էջ 43:

⁴² **Ք. Քուշնարյան**, նշվ. աշխ., էջ 174-176:

զարգացման գազաթնակետերից մեկը⁴³: Այս համատեքստում նրա վերլուծած «Ազատեա զգերեալսն» Հարության տաղին հարում են Ձայնագրյալ Պատարագի բազմաթիվ այլ նմուշներ՝ «Երկինք երկնից», «Քրիստոս փառաց Թագաւորն», «Յարեաւ Քրիստոս», «Յայն առաւօտին», «Աւետիս քեզ, Մարիամ», «Խաչն ի նախնումն», «Բանին Հօր», «Յիսուս Քրիստոս», «Ի կոյս վիմէն», «Ազատեա զգերեալսն», «Այսօր հարսն Լուսոյ», «Միաշաբաթ օր հանգստեան», «Այսօր անդրանիկ Հօր», «Այսօր Սուրբ Հոգին եկեալ», «Լեառն ցնծա դու, Թափօր», «Այսօր ցնծացէք, եղբարք», «Ի հանդէս տօնի քո» և այլն: XII-XIV դարերում կիլիկյան երաժիշտները, «*ըստ երգասարեղծության զարդոյտրուն ոճի նոր պահանջների*»⁴⁴, վերաեղանակավորել են նաև նախկինում ստեղծված՝ «Աչքն ծով»⁴⁵, «Տիրամայրն»⁴⁶, «Դիտելով զհեթանոսս»⁴⁷ տաղերը:

Ձայնագրյալ Պատարագի մի շարք մեծակերտ-զարդարական նմուշներ աչքի են ընկնում ոչ միայն ոճական ընդհանրությամբ, այլև բուն մեղեդիական դարձվածքների հարազատությամբ: Շատ դեպքերում արձանագրվում են նաև նույնական հատվածներ. ցայտուն օրինակ է «Այսօր ցնծայ լեառն Թափօր» Վարդավառի տաղը⁴⁸, որի երաժշտական բաղադրիչը հորինված է Գրիգոր Նարեկացու երկերի ակնհայտ ազդեցությամբ և պարունակում է, մասնավորաբար, «Աչքն ծով» տաղից փոխառնված մեղեդիական դարձվածքներ: Ձեռագրական սկզբնաղբյուրներում «Այսօր ցնծայ»-ն ընծայվում է Ներսես վարդապետ Մոկացուն («Մատաղ» մականունով, XV-XVI դդ.), ով հայտնի է Բաղեշի Ամրդուլու և Խնդրակատար Ս. Աստվածածին վանքերում ունեցած իր բազմարդյուն գործունեությամբ: «Այսօր ցնծայ»-ն եղել է ամենաշատ ընդօրինակված ու սիրված տաղերից մեկը, իսկ մեզ հայտնի ամենավաղ գրառումը տեղ է գտել 1476 թ. արտագրված Տաղարանում (ծեռ. N 1193, տեղն անհայտ, էջ 689)⁴⁹: Այն տվյալ դարաշրջանից մինչև մեր օրերը հասած եզակի հատակոտորներից է, մի նշխար՝ երաժիշտ-փիլիսոփա Ներսես Մոկացու թողած երաժշտաբանաստեղծական ժառանգությունից: Ամփոփելով X-XV դարերի հայ հոգևոր տաղերգության լավագույն ավանդույթները՝ տաղն ինքը ծնունդ է տվել

⁴³ Ք. Քուշնարյան, նշվ. աշխ., էջ 178:

⁴⁴ Ն. Թահմիզյան, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, էջ 110:

⁴⁵ Նույն տեղում, էջ 43 և 219:

⁴⁶ Նույն տեղում, էջ 229:

⁴⁷ Նույն տեղում, էջ 271:

⁴⁸ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, էջ 164:

⁴⁹ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Ն. եպս. Պողարեան, հատ. 4, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1969, էջ 311:

մեկ այլ ստեղծագործության՝ ոգեշնչելով անանուն մի հեղինակի, որը հետագայում, ամենայն հավանականությամբ ուշ միջնադարում, համառոտել է «Այսօր ցնծայ» տաղի երաժշտական բաղադրիչը և այն զուգորդել գրական նոր տեքստի հետ: Արդյունքում ստեղծվել է «Եւ ի յերկինս վերացեալ» Համբարձման տաղը, որ նույնպես զետեղվել է Ձայնագրյալ Պատարագում⁵⁰:

Գրիգոր Նարեկացու երաժշտարվեստի կնիքն են կրում միջնադարյան տաղերգության այլ նմուշներ, որոնցում գործածվել են նրա տաղերից բազմաթիվ կտորներ. իբրև օրինակ բերենք «Աչքն ծով» մեղեդին, որի սկզբնական մոտիվն առկա է «Ազատեա զգերեալսն» տաղում կամ այլուր⁵¹, իսկ «*ի ծով*» բառերին համապատասխանող երաժշտական նյութը՝ «Ազատեա զգերեալսն» և «Բանին Հօր» տաղերում: Նարեկացու տաղերգությունը ծառայել է իբրև անսպառ աղբյուր, որից օգտվելով՝ միջնադարյան հեղինակներն արարել են նորանոր երկեր: Այդպիսի մի նմուշ է «Դիտելով զհեթանոսս» տաղը, որից ներշնչվելով՝ կիլիկյան մի անանուն հեղինակ իր հորինած «Այսօր ցնծացեք, եղբարք»⁵² տաղ է ներմուծել քաղածո մի քանի մեղեդիական դարձվածք: Մեզ հասած հնագույն Տաղարանում (1241 թ., Դրազարկ)⁵³, տաղը, որ նվիրված է Ս. Առաքյալներ Պետրոսին և Պողոսին, հանդես է գալիս որպես «Գլուխ եկեղեցւոյ» տաղի փոխ՝ դրա հետ կազմելով «Գովեստ մատին առաքելոյն Պետրոսի» ծայրակապը, ինչն էլ ենթադրել է տալիս, որ տաղն ու փոխը գրվել են միևնույն հեղինակի կողմից: Պահպանվել են նախօրինակի հիմնական ԲՁ ծայնեղանակը, ծանր ընթացքն ու մեղեդիական զարդուլորուն ոճը: Ինչպես հայտնի է, «Դիտելով զհեթանոսս» տաղը Նարեկացու «Հաւուն, հաւուն» տաղի՝ Կիլիկիայում XIII-XIV դարերում վերաեղանակավորված տարբերակն է (առանց գրական բնագրի առաջին տողի). վերջինից ևս «Այսօր ցնծացեք» են ներմուծվել մեղեդիական բնորոշ դարձվածքներ: Սակայն, անկախ նույնական հատվածների

⁵⁰ *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 163:

⁵¹ Տե՛ս XIII դարում Վարդան Արևելցու վերաեղանակավորած՝ Ս. Աստվածածնի Վերափոխման առաջին օրվա կանոնի «Անթառամ ծաղիկ» ԲՁ դարձվածք ճաշուն (*Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց*, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1875, էջ 745), որը Մովսես Խորենացու հորինած Ծննդյան V օրվա կանոնի «Անթառամ ծաղիկ» ԲՁ չափավոր ճաշուի ծանր տարբերակն է: Տե՛ս նաև՝ ուշ միջնադարյան տաղային ստեղծագործության մի քանի այլ նմուշներ, որ ներկայացնում են երգչական այլ ավանդույթներ, մասնավորապես, «Այսօր ընդ զօրս» և «Որոյ ծայն հրեշտակաց» տաղերը Արմաշի վանքի ձեռագրերում (Մաշտոցի անվան Մատենադարան, *Նորագույն հավաքածու*, ձեռ. NN 5, 95, 97, 103):

⁵² *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 110:

⁵³ Փարիզի ազգային գրադարան, ձեռ. N 79, թ. 341ա. տե՛ս **R. Kévorkian. A. Ter-Stépanian.** Avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian. *Manuscripts arméniens de la Bibliothèque nationale de France.* Catalogue. Paris, Bibliothèque nationale de France/Fondation Calouste Gulbenkian, 1998, p. 163.

առկայությունից, «Այսօր ցնձացեք»-ը բոլորովին այլ ստեղծագործություն է, որ առանձնանում է զարգացման ավելի համեստ ու սուղ միջոցներով, անհամեմատ սեղմ չափերով և ծայնածավալով: Վառ կերպով կրելով Գրիգոր Նարեկացու երաժշտարվեստի ազդեցության կնիքը, այն լայնորեն կենցաղավարել է և մեծ տարածում ստացել՝ դառնալով Գանձարան-Տաղարանների անփոփոխ բաղկացուցիչը. ավելին՝ ինքն է որպես չափանմուշ ծառայել այլ ստեղծագործությունների համար: Նրա եղանակով երգվող նմուշներից է Կոստանդին Սսեցու «Կոյս անապական Մարիամ Սուրբ Աստուածածին» վերափոխման տաղը⁵⁴:

1241 թ. գրված Տաղարանում «Այսօր ցնձացեք» տաղի առկայությունը մեզ թույլ է տալիս կատարել հետևյալ կարևոր ճշգրտումն առ այն, որ Գրիգոր Նարեկացու «Դիտելով զհեթանոսս» տաղի վերաեղանակավորումը՝ արված կիլիկյան անհայտ հեղինակի ձեռքով, գոյություն է ունեցել արդեն **XIII դարի սկզբներին**:

Կիլիկյան շրջանում է ստեղծվել անանուն հեղինակի «Աստուածածին Կոյսն Մարիամ» տաղը⁵⁵, որ երգվում է Ավագ Ուրբաթին: Տիրամորը և Խաչին գամված Միածին Որդուն պատկերող ավետարանական ամենադրամատիկ դրվագներից մեկը (Հովհաննես, ԺԹ 25-27) միջնադարում առանձին մեկնության թեմա է դարձել, որին շատ հաճախ են անդրադարձել հայտնի ու անհայտ հեղինակները: Բազմաթիվ ստեղծագործություններից երաժշտական բաղադրիչով մեզ են հասել միայն «Տիրամայրն հանդէպ Որդոյն», «Աստուածածին Կոյսն Մարիամ» և «Ուր ես, Մայր իմ» տաղերը: Առաջին երկուսը XIX դարում վավերացվել են Հայ Եկեղեցու կողմից և տեղ գտել Ձայնագրյալ Պատարագում, իսկ երրորդը՝ XIX-XX դարերում հայկական նոտագրությամբ գրի առնված ձեռագիր ու տպագիր ժողովածուներում: Տաղի վաղագույն գրառումը գտնվում է 1348 թ. ընդօրինակված Տաղարանում⁵⁶, որի գրիչը և ստացողն է Հեսու Արևելցի երաժիշտ-փիլիսոփան՝ կիլիկյան երաժշտական մշակույթի երևելի դեմքերից մեկը:

Ձայնագրյալ Պատարագում գրառված կիլիկյան նմուշներից «Աստուածածին Կոյսն Մարիամ»-ն առանձնանում է ամենից առաջ իր ոճական

⁵⁴ Տե՛ս Մայր ցուցակ մարտենդարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յօրինեց Հ. Ս. վրդ. Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, հատ. Ե, Յայսմատուրբ-Գանձարան-Տաղարան-Տոնացոյց, Մխիթարեան հրատարակատուն, Վենետիկ, 1995, ձեռ. N 2070, թ. 235բ:

⁵⁵ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, էջ 167:

⁵⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մարտենդարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Ե, ս. 645, ձեռ. N 2070, թ. 102բ:

առանձնահատկություններով: Չուսպ և սուղ արտահայտչամիջոցներով հեղինակը հասնում է առավելագույն արտահայտչականության. տաղի երաժշտական բաղադրիչն աչքի է ընկնում ասելիքի սեղմ ոճով, գրական տեքստի հետ ունեցած սերտ փոխկապակցվածությամբ, ձևի ու բովանդակության ներքին միասնությամբ: Հիմնական կանտիլենային նկարագիրը ստեղծվում է սահուն ընթացող, գրեթե միառժամանակ հնչող հնչյունների շնորհիվ, որոնց խորքում, սակայն, մեծ դրամատիզմ կա: Խաչելության «Տիրամայրն հանդէպ Որդոյն», «Աստուածածին Կոյսն Մարիամ» և «Ու՛ր ես, Մայր իմ» տաղերը յուրատեսակ եռերգություն են կազմում. դրանք աղերսվում են ամենից առաջ՝ Ս. Մարիամ Աստվածամոր վեհ, աննկուն կերպարի մեկնությամբ, ով «Կայր», կանգուն էր «հոգևոր արիության գործությամբ»-, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը⁵⁷:

Հայ հոգևոր տաղերգության հետշնորհալիական շրջանում ստեղծված և երգչական մատյաններում տեղ գտած գրական բնագրերում բազմաթիվ են միևնույն սկսվածքն ունեցող գանձերն ու տաղերը, որոնք միջնադարյան հեղինակները հորինել են այս կամ այն հայտնի երկի նմանողությամբ: Այդպիսին է նաև «Ի հանդէս տօնի» սկսվածքով տաղը, որ հանդիպում է երկու տարբերակով: Առաջինը՝ «...ծեր խրախացեալ ցնծամբ» շարունակությամբ, նվիրված է Ղևոնդյանց քահանաներին, որի վաղագույն գրառումը տեղ է գտել հայոց հնագույն Տաղարանում⁵⁸ և հեղինակն անհայտ է: Իսկ երկրորդը՝ «...քո խախացեալ տօնեմբ» շարունակությամբ, նվիրված է Ընդհանրական Եկեղեցու մեծ սրբեր Պետրոս հայրապետին և Աբիսղոմ սարկավագին և վերագրվում է Գրիգոր Իլյաթեցուն, այսինքն ստեղծվել է XIV դարավերջին կամ XV դարասկզբին: Տաղի գրական բնագիրը հորինված է արդեն եղածի նմանողությամբ՝ ներառելով նաև նախօրինակի բառազանձը:

Ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, անանուն հեղինակի՝ Ղևոնդյանց քահանաներին նվիրված տաղի երաժշտական բաղադրիչը կա՛մ մոռացության է տրվել, կա՛մ էլ եկեղեցական երաժիշտները պատշաճ են գտել դրա բանաստեղծական տեքստը հարմարեցնել միևնույն սկսվածքով՝ խնդրո առարկա տաղի երաժշտական բաղադրիչին: Այս պատճառով էլ տարբեր տոներին երգվող և երգչական տարբեր ավանդույթներ ներկայացնող այս նմուշներն, ըստ էության, ուշ միջնադարյան ծայնագրյալ ժողովածուներում գրառված են միևնույն եղանակով, ինչպես, օրինակ, Ն.

⁵⁷ Մաղաքիա արք. Օրմանեան, Համապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 795:

⁵⁸ Փարիզի Ազգային գրադարան, ձեռ. N 79, թ. 396ա:

Թաշճյանի ձայնագրած տարբերակը⁵⁹, Հ. Չերչյանի գրառած և Արմաշում երգվող օրինակը⁶⁰, այլև «Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստանեայց Եկեղեցւոյ» ժողովածուում տեղ գտած նմուշը⁶¹: Առաջին երկուսը երգվում են Ս. Հայրապետաց, իսկ երրորդը՝ Ս. Ղևոնդյանց տոներին:

Ուրեմն, զույգ տաղերն իրապես ունեն մեկ երաժշտական բաղադրիչ⁶², որն իրենից ներկայացնում է մի դինամիկ երաժշտական պատում՝ մերթ հուզախառն, մերթ հանդարտ-հայեցողական նկարագրերի համադրությամբ: Հիմնական՝ Գձ ձայնեղանակին բնորոշ տիպական պտույտների անընդհատ տեղաշարժերը, որ ընդգրկում են և՛ դիմող, և՛ վերջավորող ձայների ոլորտները, ստեղծում են դրվագազարդ, լայնահոս մեղեդիական պատկեր: Ուշագրավ է տաղի ձայնեղանակային նկարագիրն իր բազմաթիվ զարտուղություններով ու ձայնակարգային դրսևորումներով: Տաղում գործածված ադինքնող և ճաշակավոր համադրումներն, անշուշտ, վկայում են հեղինակի՝ «գոյների» տեսության և գործնական կիրառման ասպարեզում ունեցած մեծահմուտ վարպետության մասին:

Ձայնագրյալ Պատարագի տաղերի և մեղեդիների ընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ դրանցից մի քանիսի երաժշտական բաղադրիչները համընկնում են: Դեռևս միջնադարյան ձեռագրերում տվյալ տաղային միավորի լուսանցքում գրիչները հղում էին որևէ հայտնի տաղ կամ մեղեդի, որի «գույնով» կամ «ձայնով» պետք է երգվեր այն: Ավանդույթի հիմնադիրն է համարվում Ներսես Շնորհալին⁶³, որն ինքն էր ցուցումներ թողել իր տաղերի դիմաց՝ դրանք Գրիգոր Նարեկացու տաղերի եղանակներով կատարելու վերաբերյալ: Այնուհետև իր՝ Շնորհալու ստեղծագործություններն էլ չափանմուշ դարձան այլ հեղինակների հորինած տաղերի ու մեղեդիների համար: Միջնադարյան այդ ավանդույթն իր արտացոլումն է գտել նաև Ձայնագրյալ Պատարագում, որտեղ միևնույն եղանակով են ձայնագրված մի քանի տաղեր և մեղեդիներ: Դրանք են՝

⁵⁹ *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 111:

⁶⁰ **Մաշտոցի անվան Մատենադարան**, *Նորագոյն հավաքածու*, ձեռ. N 6, էջ 181:

⁶¹ *Մեղեդիներ, տաղեր եւ գանձեր Հայաստանեայց Եկեղեցւոյ*, Անթիլիաս, հրատարակության Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիո, 1990, էջ 109: Տաղի սկզբնաղբյուրը նշված չէ: Ելնելով կազմող և հեղինակ Ջ. եպս. Ազնավորյանի այն տեղեկությունից, թե «Այս ժողովածուին բաղկացուցիչ միաձայն կտորները կարեւոր մասամբ մը կու գան երաժշտապետ Լեւոն Չիլինկիրեանէն, իր աշակերտներու ընդօրինակութիւններէն» (էջ 16), պետք է ենթադրել, որ խնդրո առարկա կտորը ևս պատկանում է դրանց շարքին:

⁶² Նշված նմուշների երաժշտական բաղադրիչների միջև առկա են փոքր տարբերակումներ:

⁶³ **Ն. Թահմիզյան**, *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 65:

ա. Ծաղկազարդի «Յիսուս Քրիստոս» և Հարության «Ի կոյս վիմէն»,

բ. Համբարձման «Այսօր անդրանիկ Հօր», Հոգեգալստյան «Այսօր Սուրբ Հոգին եկեալ» և Վարդավառի «Լեառն ցնծա դու, Թափօր»,

գ. Ծննդյան «Այսօր տօն է» և Զատիկի և Հինանց կիրակիների «Միաշաբաթ օր հանգստեան» մեղեդիները:

Միջնադարյան տաղերգության սքանչելի նմուշներից է «Այսօր տօն է Ծննդեան» տաղը⁶⁴, որի հեղինակությունը Գանձարաններն ընծայում են Աստվածատուր Հենեցուն: Ըստ Հ. Անասյանի՝ նա եղել է «Չորրորդ Հայոց Հայնի կամ Հենի ավանից»⁶⁵, իսկ Հ. Սահակյանը⁶⁶, հիմք ընդունելով Մատենադարանի 1556 թ. արտագրված N 8968 ձեռագիրը, որում, ըստ իր ուսումնասիրությունների, գրառված է տաղի հնագույն օրինակը, եզրակացնում է, որ հեղինակն ապրել է XVI դարի առաջին կեսին⁶⁷: Ձեռագրում (թ. 93բ) տաղն ունի հետևյալ խորագիրը՝ «Ճառ ի Աստուածատուր վարդապետէ Հենեցոյ ասացեալ ի խնդրոյ Մինաս սարկաւագին, վասն Ծննդեան Քրիստոսի»:

*Այսօր փօն է ծննդեան, աւերի՛ս,
Տեառն մերոյ և յայտնութեան, աւերի՛ս:
Այսօր արնն արդարութեան, աւերի՛ս,
Երևեցաւ ի մէջ մարդկան, աւերի՛ս:
Այսօր Սուրբ Կոյսն անապական, աւերի՛ս,
Ծնաւ երբոր զանմահ արքայն, աւերի՛ս:*

Ն. Թաշճյանը ցուցում ունի տաղի ծիսական կիրառության վերաբերյալ. «Ի թափօրի զկնի մեղեդիկի յետ բացման վարագուրին երգեալ յաւուր Ծննդեան ութօրէից»: Տաղը, որ պատկանում է հոգևոր ավետիսների երգատեսակին, ծանրընթաց է, ընդգծված հանդիսավորությամբ: Այն, հիրավի, մեծ ժողովրդականություն է վայելել, և այսօր էլ Տիրոջ Ծննդյան տոնին երգվող ամենահանրաճանաչ և սիրված երգերից մեկն է՝ իր «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» ցնծալի ավետիսով:

Հայոց Պատարագի տաղերն ու մեղեդիները՝ հայ մասնագիտացված երգարվեստի այդ անգին գոհարները, որ անխոնջ աշխատասիրությամբ՝ տուն առ տուն խազագրելով, ընդօրինակել էին մեր միջնադարի վանական գրիչներն

⁶⁴ Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, էջ 112:

⁶⁵ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հատ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 685:

⁶⁶ Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, XVI-XVII դդ., աշխ. Հ. Սահակյանի, հատ. Ա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 89:

⁶⁷ Նույն տեղում, էջ 684:

ու զետեղել ձեռագիր մատյաններում, XIX դարում փրկվելով անհետացումից՝ վերստին նոր կյանք ստացան՝ գրի առնվելով նոր հայկական ծայնանիշներով և զետեղվելով արդեն տպագիր ժողովածուներում⁶⁸։ Ս. Պատարագի արարողության ընթացքին հնչող այս հոգևոր երգերի ամբողջական ուսումնասիրությունը հայ երաժշտագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է, որի իրականացումը մի նոր լույս կսփռի հայ հոգևոր երգարվեստի պատմության ու տեսության մի շարք հիմնախնդիրների վրա։

Ամփոփում

Հայ հոգևոր տաղերգության հսկայածավալ ժառանգությունից երաժշտական բաղադրիչով սակավաթիվ օրինակներ են հասել մինչև մեր օրերը։ Դրանց մի մասը պահպանվել է Ն. Թաշճյանի ծայնագրությամբ և տեղ գտել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից վավերացված «Զայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորում։ Մինչ այժմ հայ երաժշտագիտության մեջ սոսկ հատուկնետ նմուշներ են արժանացել քննության. հարկ է, սակայն, իրականացնել դրանց ամբողջական ուսումնասիրությունը, ինչը մի նոր լույս կսփռի հայ հոգևոր երգարվեստի պատմության ու տեսության մի շարք հիմնախնդիրների վրա։ Մեր աշխատանքում ներկայացվում է նշյալ ժողովածուում ընդգրկված տաղերի և մեղեդիների ընդհանուր համապատկերը, դիտարկվում են Գանձարան-Տաղարանների հետ դրանց ունեցած անմիջական աղերսները, ըստ կարելիույն ճշգրտվում են տաղային միավորների ստեղծման ժամանակաշրջանն ու վայրը, ինչպես նաև հեղինակային պատկանելությունը։ Քննվում են նաև երաժշտական բաղադրիչներին բնորոշ առանձնահատկությունները, ծայնեղանակային համակարգին, մեղեդիական փոխառնչություններին վերաբերող և այլ հարցեր։

Բանալի բառեր՝ Ս. Պատարագ, Ն. Թաշճյան, հայկական նոտագրություն, տաղ, մեղեդի, ավետիս, տաղային արվեստ, Գանձարան, Տաղարան, ծայնեղանակ։

ТАГИ И МЕГЕДИИ АРМЯНСКОЙ ЛИТУРГИИ

Резюме

*Астхик Мушегян (Армения),
кандидат искусствоведения*

Институт древних рукописей

*имени Месропа Маштоца – Матенадаран,
Центр армянской духовной музыки*

Из обширного наследия армянского искусства *тагов*, основными жанрами которого являются *таг и мегеди*, сохранились редкие образцы, содержащие музыкальный компонент. Часть из них армянской нотописьмо записал Николайос Ташчян, поместив их в сборник “Записанные песнопения Святого Патарага” (“Записанные песнопения Святой Литургии”), одобренный Армянской Апостольской Церковью. До настоящего времени в армянском музыковедении были изучены лишь несколько образцов из этого сборника. Однако необходимо

⁶⁸ Զայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի հատորը հրատարակվել է նաև եվրոպական նոտագրությամբ, խմբ.՝ Ա. Բաղդասարյան, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2012։

осуществить их целостное и всестороннее изучение, что могло бы пролить новый свет на некоторые основополагающие вопросы истории и теории армянской духовной музыки. В настоящей работе дана общая картина вошедших в указанный сборник песнопений, выявлены их непосредственные связи со средневековыми певческими книгами *Гандзаран* и *Тагаран*, по мере возможности уточнены время и место создания *таговых* единиц, а также их авторство. В статье рассмотрены также характерные особенности музыкальных компонентов, вопросы, относящиеся к гласовой системе, мелодическим взаимосвязям и т. п.

Ключевые слова: Св. Патараг, Н. Ташчян, армянская нотопись, *таг*, *мегеди*, *аветис*, искусство *тагов*, *Гандзаран*, *Тагаран*, глас.

TAGHS AND MEGHEDIES OF THE ARMENIAN LITURGY

**Astghik Musheghyan (Armenia), PhD in Art
Mashtots Matenadaran Research Institute of Ancient Manuscripts**

Out of the immense heritage of Armenian *tagh* chanting only rare pieces have survived up till now with their musical component. Some of them were preserved in Nicoghayos Tashchyan's recordings, made with Armenian notes, and were published in the miscellany *Notated Chants of the Holy Liturgy* approved by the Armenian Apostolic Holy Church. Up till now, only a few of the preserved samples have been studied by Armenian musicologists. However, there is a need for fundamental researches, which would shed a new light on a number of issues related to the history and theory of Armenian sacred chanting. This paper presents a general panorama of *taghs* and *meghedies* (genres of Armenian sacred music) included in the abovementioned miscellany, as well as observe their direct connection with the liturgical books *Gandzaran* and *Tagharan* with an attempt to define as accurately as possible the period and the place of their creation and their authorship. We also consider the individual characteristics of the musical components, issues related to the modal system, melodic interconnections, etc.

Keywords: Holy Liturgy, N. Tashchyan, Armenian notation, *tagh*, *meghedy*, *avetis*, art of *tagh*, *Gandzaran*, *Tagharan*, mode.